



ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄ.

Մեսիան մեզ համար անապատում ճանապարհ է պատրաստում: Երբ մենք մեր կյանքը տալիս ենք Նրան, Նա ամեն բան փոխում է: Մեր անապատը դառնում է փարթամ, պտղաբեր այգի, որտեղ մենք կարող ենք գտնել խաղաղություն և զորություն: Անապատի այս ճանապարհի հետ կապված չորս հատկանիշներ կան՝ **զորություն, հրաշքներ, վտակներ և փողոցներ**: Այս պատգամը կենտրոնանում է զորության վրա:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԵՍ. 35:1-4

Անապատն ու չոր երկիրը կ'ուրախանան, եւ կ'ցնծա ամային ու կ'ծաղկի ինչպէս շուշանը:
2 Կբացվի, կ'ծաղկի եւ կ'ցնծա ցնծալով եւ բարձրաձայն երգելով. Լիբանանի փառքը նորան կ'արվի՝ Կարմեղոսի եւ Սարոնի վայելչությունը. նորանք կտեսնեն Տիրոջ փառքը, մեր Աստուծո վայելչությունը: **3 Ու՛ժ առեք թուլացած ձեռքեր, եւ տկարացած ծունկեր զորացրէք:** **4 Ասեցէք թուլասիրաներին, (to thise with anxious) ուժովացէք, մի վախեցեք, ահա ձեր Աստուածը գալիս է վրէժ առնելու, Աստուծո հատուցումով է գալիս նա եւ նա ձեզ փրկելու է (Yasha):**

3 **Ու՛ժ առեք թուլացած ձեռքեր, եւ տկարացած ծունկեր զորացրէք:**

1. ԹՈՒԼԱՅԱԾ ՁԵՌՔԵՐ – ՁԵՌՔԵՐԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆԸ:

Երբեմն մեր ձեռքերը կարիք ունեն զորանալու:

Նենմ. 8:6 - Եւ Եզրասն օրհնեց Եհովա մեծ Աստուծուն. Եւ բոլոր ժողովուրդը պատասխանեցին. Ամէն, Ամէն, **իրանց ձեռքերը բարձրացնելով, եւ խոնարհուելով երեսի վրա մինչեւ գետինը երկրպագություն արին Տիրոջը:**

Ել. 17:11-12 - **ու Եւ լինում էր որ՝ երբոր Մովսէսն իր ձեռքերը վեր էր բարձրացնում, Իսրայելն էր հաղթում. եւ հէնց որ իր ձեռքերը իջեցնում էր, Ամաղէկն էր հաղթում:** **12 Եւ քանի որ Մովսէսի ձեռքերը հոգնելիս ծանրանում էին, Ահարօնը ու Ուլրը մի քար առան եւ նորա տակը դրեցին, եւ ինքը նորա վրա նստեց. եւ Ահարօնը եւ Ուլրը մէկն այս կողմից, եւ միյուսն այն կողմից նորա ձեռքերը բռնած բարձր էին պահում, եւ մինչեւ արևվի մայր մտնելը նորա ձեռքերը (հաստատուն) բարձրացրած մնացին:**

Սաղ. 63:4 - Այսպէս կօրհնեմ քեզ իմ կեանքում. **քո անունով կբարձրացնեմ իմ ձեռքերը:**

Սաղ. 134:2 - **Ձեր ձեռքերը բարձրացրէք դէպի սրբությունը եւ օրհնեցէք Տիրոջը:**

1 Տիմ. 2:8 - Արդ կամենում եմ, որ մարդիկ ամեն տեղ աղօթք անեն, սուրբ ձեռքեր վեր բարձրացնեն առանց բարկության եւ երկմտութեան:

3 Ուժ առեք թույացած ձեռքեր, եւ տկարացած ծունկեր զօրացրէք:

II. ՏԿԱՐԱՑԱԾ ԾՆԿՆԵՐ – ԾՆԿԵՐԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԱՂՈԹՔԻՆ:

Երբեմն մեր ծնկերը կարիք ունեն գորանալու: Ծնկելը ենթարկվելու, հանձնվելու ձև է: Մենք պետք է ամեն բանի համար աղոթենք: Աղոթքը նման է ազատ արձակման կոճակին:

1 Պետ. 5:7 - 7 Ձեր բոլոր հոգսը նորա վրա զցեցէք, որովհետեւ նա հոգս է անում ձեզ համար:

Սաղ. 55:22 - 22 Քո հոգսերը Աստուծո վրա զցիր, եւ նա խնամք կանէ քեզ. նա չի թողնի որ արդարը հավիտեան շարժվի տեղից:

Մենք բոլորս ինչ որ մի բեռ ունենք մեր կյանքում:

- Մեր ձեռքերը
- Մեր ծնկները
- Մեր ոտքերը



Ուղտերը խաղաղ են, քանի դեռ քայլում են: Այն պահից, երբ ուղտին փորձում են ծնկի բերել, նա դառնում է ամբողջովին ըմբոստ և անհնազանդ:

Նկատենք կյանքի այս 3 ոլորտները, որոնցում հաճախ մենք լավ չենք զգում և ապաքինման կարիք ունենք:

Եբր. 12:12-13 - 12 Նորա համար հաստատեցէք թույացած ձեռները, եւ տկարացած ծունկերը, 13 Եւ ձեր ոտների համար ուղիղ ճանապարհներ շինեցէք, որ կաղը չզլորվի, այլ մանավանդ բժշկվի:



Սաղ. 38:8 - Ես թույացած եւ շատ սաստիկ փշրված եմ. Մռնչալու պես սնքում եմ ցավից:

Հռ. 15:1 - Մենք որ զօրավոր ենք՝ պէտք է տկարների տկարությունը վեր առնենք, եւ միայն մեր անձերին հաճելի չ'լինինք:

4 Ասեցէք թույասիրտներին, ուժովացէք, մի վախեցեք:

III. ԱՆՅԱՆԳԻՍՍ ՍԻՐՏ – ՍԻՐՏԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՄԵՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻՆ:

- **Վախը հեշտությամբ կարող է սողոսկել մեր սրտի մեջ: Երբ մենք մտածում ենք Աստծո խոսքի վրա, Նա մեզ ցույց է տալիս մեր գնալու ճանապարհը: 3x Moses, 3 x God, 1 x people.**

Մովսէսը, Աստված և ժողովուրդը ասացին Հեսուին – Զօրացիր եւ քաջ եղիր

2 Օր. 31:7 - Եւ Մովսէսը Յեսուին կանչեց, եւ ասեց նորան բոլոր Իսրայելի առաջին. **Ուժովացիր եւ քաջ եղիր.** որովհետեւ դու այս ժողովրդին տանելու ես այն երկիրը, որ Եհովան նորանց հայրերին երդում արավ որ նորանց տա. եւ դու նորանց ժառանգություն ես տալու:

2 Օր. 31:23 - Եւ նա Նավէի որդի Յեսուին պատուիրեց եւ ասեց. **Ջորացիր եւ քաջ եղիր.** որովհետեւ դու պիտի տանես Իսրայէլի որդիներին այն երկիրը, որի համար նորանց երդում արի. եւ ես քեզ հետ կ'լինեմ:

Հեսու 1:6-7 - **Ջորացիր եւ քաջ եղիր.** որովհետեւ այս ժողովրդին դու պիտի ժառանգեցնես այն երկիրը, որի համար սորանց հայրերին երդում արի սորանց տալու համար: 7 Միայն թե **գորացիր եւ շատ քաջ եղիր,** որ պահես եւ անես այն ամեն օրէնքի պես, որ իմ ծառա Մովսէսը քեզ պատուիրել է.

Հեսու 1:9 - Ահա քեզ պատուիրում եմ, գորացիր եւ քաջ եղիր, մի վախենար եւ մի զարհուրիր. որովհետեւ քո Տէր Աստուածը քեզ հետ է ամեն տեղ ուր որ գնաս:

Հեսու 1:17 - Ինչպէս որ Մովսէսին էինք լսում, այնպէս էլ քեզ կ'լսենք. միայն թէ քո Տէր Աստուածը քեզ հետ լինի, ինչպէս որ Մովսէսի հետ էր:

- **Յեսուի նման, մենք էլ չպետք է վախենանք, այլ լինենք ուժեղ և համարձակ:**

Դավիթը ասաց Սողոմոնին.

3 Թագ. 2:1-2 - Երբ մոտեցան Դավիթի մահական օրերը, նա դիմելով իր որդի Սողոմոնին՝ ասաց. Ըստ այս աշխարհի կարգի, ես անցա իմ կյանքի ճամփան. Բայց դու քաջացիր եւ տղամարդ եղիր:

Պողոսը Տիմոթէոսին.

2 Տիմ. 2:1 - Արդ դու, իմ որդեակ, **գորացիր այն շնորհքով** որ Քրիստոս Հիսուսում է:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՐՑ:

Ինչն է զորացնում մեր սիրտը: Ի՞նչ պետք է մենք անենք, երբ շվարած ենք, կամ մեր խնդիրների համար պատասխանների կարիք ունենք: Երկրպագությունը, աղոթքը և Աստծո խոսքի վրա մտածելը մեզ բերում են Նրա ներկայության մեջ:

2 Օր. 6:6 - Եւ այս խօսքերը, որ ես այսօր քեզ պատուիրեցի, քո սրտի մէջ լինեն:

2 Օր. 11:18 - Եւ այս իմ խօսքերը ձեր սրտի եւ հոգիի մէջ դրէք, եւ նորանց նշանի համար ձեր ձեռքերի վրա կապեցէք, եւ նորանք ճակատանոց լինեն ձեր աչքերի մէջտեղում.

Սաղ. 119:11 - Իմ սրտում թագցրի քո խօսքերը, որ չմեղանչեմ քեզ դէմ:

Եփ. 4:26 - Բարկանաք՝ մի մեղանչէք.

Սաղ. 4:4 - Եթե բարկանաք՝ մի՛ մեղանչէք, խօսեցէք ձեր սրտերի հետ ձեր անկողիններում եւ լուռ մնացէք: (Սէլա:)